ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐԻ ՍԵՍԻԱՆԵՐԸ

Հունվարի 13-ին և 14-ին տեղի ունեցան Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի բաժանմունքների գիտական սեսիաները, որտեղ ամփոփվեցին երեք տարվա աշխատանքի արդյունքները։

Ֆիզիկո-մաթեմատիկական, բնական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի սեսիայում Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ Ա. Նազարովը հաղորդում տվեց կառուցվածքների սեյսմոկայունության էքսպերիմենտալ հետազոտության պրոբլեմի ներկա վիճակի մասին։

Մեծ հետաքրքրություն ներկայացրեց տեխնիկական գիտությունների թեկնածու Գրիգորյանի զեկուցումը բնակելի տների կամարաձև ծածկերի նոր տիպի մասին՝ տեղական շինանյութերից։ Կամարաձև ծածկերը գործնական մեծ հետաքրքրություն են ներկայացնում, որովհետև շինանյութի՝ փայտեղենի, երկաթի, ցեմենտի և այլ նյութերի մեծ խնայողություն են տալիս։

Բաժանմունքը լսեց ֆիզիկո-մաթեմատիկական գիտությունների թեկնածու Մ. Ջրբաշյանի զեկուցումը «Անսահմանափակ մարզերում պոլինոմների սիստեմի լիակատարության մասին»։ Այդ զեկուցումը հանդիսացավ Ակադեմիայի մաթեմատիկական սեկտորում կատարվող հետազոտական բեղմնավոր աշխատանքի վկայություն։

Սևանի էքսպեդիցիայի արդյունքների մասին զեկուցեց ավագ գիտական աշխատակից Բ. Բեկ-Մարմարչը։ Պրոֆեսոր Դավթյանը պատմեց էլեկտրոլիտի լուծույթների մի քանի հատկությունների ուսումնասիրման ասպարեզում իր կատարած աշխատանքների արդյունքների մասին։

Սեսիան լսեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Ի. Եղիազարյանի հաշվետու զեկուցումը բաժանմունքի երեք տարվա աշխատանքի մասին։ Զեկուցողը նշեց, որ բաժանմունքի գիտական հաստատությունները մեծ աշխատանք են կատարել և դա նշանակալից չափով առաջ է մղել ֆիզիկո-տեխնիկական գիտությունների զարգացումը Հայաստանում։

Գյուղատնտեսական գիտությունների բաժանմունքի սեսիայում լսվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ Ա. Մաղաքյանի զեկուցումը՝ «Արոտավայրերի կատեգորիան որոշելու նոր մեթոդը»։

Զեկուցողը պատմեց արոտավայրերի շորացման համար իր մշակած նոր աղյուսակի մասին, որը կարող է կիրառվել ո՛չ միայն Կովկասում, այլև ՍՍՌՄ մյուս լեռնային մարզերում։

Բնական գիտությունների դոկտոր Ա. Տեր-Կարապետյանը զեկուցեց «Բիոկատալիզատորների դերը անասունների կյանքում» թեմայի շուրջը։ Զեկուցողը առանձնապես նշեց բիոկատալիզատորների կիրառման նշանակությունը գյուղատնտեսական անասունների կերակրման ժամանակ՝ կերերի յուրացումը և մարսողությունը, ինչպես նաև անասունների մթերատվությունը և բեղմնավորությունը բարձրացնելու նպատակով։

Սեսիայի աշխատանքի վերջում գյուղատնտեսական գիտությունների բաժանմունքի նախագահ՝ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Մ. Թումանյանը ընդարձակ զեկուցում տվեց բաժանմունքի ինստիտուտների ու սեկտորների եռամյա գործունեության մասին։

Հասարակական գիտությունների բաժանմունքի սեսիայում պատմական գիտությունների թեկնածու Ա. Հարությունյանը հանդես եկավ «Ընկեր Ստալինի ուսմունքը սոցիալիստական գիտակցության, ռևոլուցիոն տեսության և քաղաքական պարտիայի մասին» զեկուցումով։

Սեսիայում լսվեցին Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ Լ. Մելիքսեթ-Բեկի «Նոր նյութեր Խ. Աբովյանի մասին», Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Ա. Տերտերյանի՝ «Շիրվանզադեն և մեր օրերը», բանասիրական գիտությունների թեկնածու Գ. Սևակի «Սովետահայ պատմավեպի լեզուն», պատմական գիտությունների թեկնածու Կ. Ղաֆադարյանի «Դվինի 1946 թվի հնագիտական պեղումները» զեկուցումները։

Բաժանմունքի աշխատանքի մասին հաշվետվությամբ հանդես եկավ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Գ. Ղափանցյանը։

Բիոլոգիական գիտությունների բաժանմունքի սեսիայի նիստում լսվեց բիոլոգիական գիտությունների թեկնածու Ա. Յացենկո-Խմելևսկու զեկուցումը «Տեսակի և ընտանիքի նշաններ փայտանյութի կառուցվածքի մեջ»։

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Վ. Գուլքանյանը զեկուցեց ցորենի այլ տեսակների հետ հիբրիդացիայի ժամանակ Timopheevi-ի ժանգակայունության ժառանգականության մասին։ Նաև հաշվետու զեկուցում տվեց բաժանմունքի աշխատանքի մասին։

Բաժանմունքների սեսիաներում լսված բոլոր զեկուցումները մտքերի աշխույժ փոխանակություն առաջ բերեցին։

Սեսիաների աշխատանքի վերջում տեղի ունեցան բաժանմունքների բյուրոների ընտրություններ։

(ՀՀԳ)